№ 175 ՈՒՐԲԱԹ, 10 ՕԳՈՍՏՈՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆԱՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 10 ՕԳՈՍՏՈՍԻ № 175

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԴՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և ամն օրերից).

Բայտարարութիւն ընդունվում է ամեն ձեռով

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆԱՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“. TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

Բայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բայտառպէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՂԱՒԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՊՐՕԳԻՄՆԱԶԻՕՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Պետական արական պրօգիմնազիաների ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ.

Փաթեղ ուսուցում տղաների և աղջիկների. Այս տարի բացվում է **Ireտրդ** դասարանը. Վերաքննութիւնները սկսվում են օգոստոսի 27-ից, ընդունելութեան քննութիւնները՝ ալբուքենական, տարրին և բարձր պատրաստականները, I և II դասարանները մանելու համար՝ օգոստոսի 28-ից. Խնդիրներ՝ ծննդեան և ծաղկի վկայականների հետ ընդունվում են օգոստոսի 22-ից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը.

Սօլօլակ, Սերգիեվսկայա փողոց, սեփական տուն, № 20. (առ.) 559. 7—2

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂ. Ֆ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՑԻ
Բաժանմունքը Թիֆլիսում Փօղ. պր. 21, տուն Արտիտական Ընկ., տէլէֆօն № 355.
Պահեստում միշտ կան մեծ բանակութեամբ բնիւր պաստառներ ամենավերջին ոսիլով,
ՖԱԲՐԻԿԱՑԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կօպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր րուլօն:
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԶՐԻ:
(հ.ու.) առ. 154. 50—44

ՆՈՐ ԳԾԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Նուռաով կարս քաղաքը կապված կը լինի երկաթուղային գծով Սարիղամիշի հետ:

Առաջիկայ ամիսներում մեծ եռանդով առաջ կը տարվեն կառուցման աշխատանքները և շինված բաժինների շրջանում կը սկսեն երթևեկել բանւորական գնացքներ:

Անշուշտ՝ երկաթուղային այն հաղորդակցութիւնը, որ կաւելանայ մինչև այժմ եղածի վրա, միայն մի քան կապացուցանի, որ մեր երկրում չափազանց գնահատելի է հաղորդակցութիւնների զիւրութեան ամեն մի նոր քայլ և հանգէս կը բերի երկաթուղային ցանցի աւելի մեծ զարգացումն մեր երկրում:

Կարս-Սարիղամիշեան գիծը կարիք ունի շարունակութեան և ճիւղաւորութեան, որպէս զի հնարաւոր լինի կապել Կարսի նահանգի բոլոր մասերը մեր երկրի կենտրօնական վայրերի հետ և այդպիսով նպաստել թէ տնտեսական և թէ վարչական կեանքի պահանջներին:

Ներկայումս խօսվում է և մի ուրիշ երկաթուղային գծի կառուցման ծրագրի մասին, որի իրագործութեամբ Կարսը պէտք է կապվի Արդուինի և Բաթումի հետ և ուրեմն միանգամից հաղորդակցութեան մէջ մտնի նաւագնացային շրջանների հետ: Այդ ծրագիրը դեռ ևս վերջնականապէս չէ մշակված, բայց շուտով պէտք է մանրամասն ուսումնասիրութեան և քննութեան առարկայ լինի յատուկ յանձնաժողովի ձեռքով: Այդ գիծը նոր ուղղութիւն կը տայ Երևանեան նահանգի, Պարսկաստանի և Թիւրքիայի որոշ մասերի ապրանքներին, բանալով ուղիղ ճանապարհ նրանց համար դէպի սեւ ծովեան հաւահանգիստները:

Միևնոյն ժամանակ հաստատում են և նոր երկաթուղային գծերի ծրագիրներ, որոնցով պէտք է Անդրկովկասը կապվի Պարսկաստանի և Հիւսիսային Կովկասի հետ: Մշակվում է նախագիծ միացնելու Սուխումը Վլադիկավկազեան գծի Նեվինոմօրսկայա կայարանի հետ և դէպի հիւսիս Ռուսաստան:

Եթէ դրանց վրա աւելացնենք, որ Անդրկովկասի վրայով պէտք է անցնի ռուս-հնդկական մեծ երկաթուղին, կը տեսնենք, որ Անդրկովկասի համար պատրաստվում են հաղորդակցութեան ճանապարհներ նաև դէպի ծայրագոյն հարաւ. Լրագրական տեղեկութիւնները ասիարկում են, որ Ռուսաստանը իր վերջին բանակցութիւնների մէջ, որ ունեցել է Փրանսիայի և Անգլիայի հետ, վերջնական ձեւակերպութիւն է տուել իր մասնակցութեանը թէ հրնդկական և թէ Բաղդադի երկաթուղագծերի իրագործութեան խնդիրներում:

Ըստ երևոյթին մենք մի տասնեակ տարուց յետոյ ստեղծած կը լինենք հաղորդակցութիւններ արտաքին աշխարհի հետ և կընկնենք այդ երկիրների շարքի մէջ, որոնք դրված կը լինեն մեծ ճանապարհների վրա:

Բայց որպէսզի այդ հաղորդակցութեան հետևանքը աւելի բազմարդիւն լինի մեր երկրի համար, կարևոր է, որ մենք կարող լինենք մի կողմից արդիւնաբերական մեր ոյժը մեծացնել թէ գիւղատնտեսութեան և թէ հանքային ու գործարանային ասպարէզներում, իսկ միւս կողմից բարւոքենք երկրի խորքում հաղորդակցութեան ուղիները, որոնք ներկայումս չափազանց անբաւարար վիճակի մէջ են: Կախէթի, Շուրոյ, Եամխոյ, Շուրայի երկաթուղիների օրինակով պէտք է մշակվի ներքին հաղորդակցութեան մի լայն ցանց և իրագործվի առնեւազն միջոցում:

Մեր երկրի համար հաղորդակցութեան ճանապարհների բարւոքումը ունի հիմնական անգային նշանակութիւն, որը աւելի ու աւելի համակում է հանրային գիտակցութիւնը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Դիւնկիրխէն. — Ռուանկարէն ներքին գործերի մինիստրի ուղեկցութեամբ, առաւօտեան ժամը 11-ին հասաւ Նահանգապետը, ողջունվելով տեղական իշխանութեան և բազմաթիւ ժողովրդի կողմից: Ի պատիւ նրան քաղաքային թատրոնում բանկէտ տեղի ունեցաւ 150 հոգու մասնակցութեամբ. Ռուանկարէն ճառ արտասանեց այն միաքն յայտնելով, որ Ռուսաստանում իրան ցոյց տուած պատիւները վերաբերում էին ոչ իրան և ոչ էլ ֆրանսիական կառավարութեանը, այլ ֆրանսիական ազգին: «Ռուսաստանը յանձնարարեց ինձ իր համակրութիւնները յայտնել Ֆրանսիային: Ապա հաւատիացրեց, որ երկու ազգերի բարեկամութիւնը անփոփոխ է: Ռուսաստանը և Ֆրանսիան հաւասարապէս շահագրգռված են խաղաղութեան պահպանութեանը՝ ուղղված դաշնակցութեան անխախտելիութեամբ, որը միևնոյն ժամանակ հնարաւորութիւն է տալիս փոխադարձ համաձայնութեամբ անհրնկալ պատահականութիւնների առաջն առնելու. Այդ դաշինքը լրացվում է և ընդարձակվում շնորհիւ Անգլիայի սերտ համաձայնութեան. Ոչ ոք երեք բարեկամ պետութիւնների այդ խաղաղ համակցութեան մէջ չէ կարող ագրեսիվ արտայայտութիւն տեսնել». Ռուանկարէն կոչ արեց պահել և զարգացնել Ֆրանսիայի կենսական հետաքրքրութիւնները և աւարտեց իր ճառը բաժակ առաջարկելով ի պատիւ հասարակապետութեան և երկրի, որպիսի կենացը ընդունվեց մեծ ոգևորութեամբ:

—

Պարիզ. — Ժամանեց Ռուանկարէն, կայարանում նրան դիմաւորեցին բոլոր մինիստրները և ժողովրդի ահագին բազմութիւն ցնծալից ողջոյններով:

—

Թաւրիզ.—Տեղիս մուշտէիդների անունով ուղարկված հեռագրով նեղջեֆի մուշտէիդները պահանջում են ազգի կանգնել պաշտպանելու երկրի անկախութիւնը օտարների դաւերից, այլև աշխատել վերականգնել սահմանադրութեան նախկին հմայքը:

Բաղաքում երևացել են թուրքիները Ատրպատականի սահմանադրական կոմիտէի կնիքով, որանցով կոչ են անում ձեռք բերել սահմանադրական կարգեր և փրկել հայրենիքը:

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Կ. Պոլիս.—Բարձրագոյն Դուռը չափազանց եռանդուն առաջադրութիւն արեց Յեահնիէում չերնօգօրցիների գործողութիւնների առիթով Բերանում, բողոքելով միաժամանակ այդ մասին մեծ պետութիւններին:

Օգոստոսի 27-ին մինիստրների խորհուրդը նիստ ունեցաւ մինչև գիշերվայ ժամը 2-ը. Մինիստրական ճգնաժամ էր սպասվում Քեամիլի և Հիլմի փաշայի մէջև նոր տարաձայնութիւններ ծագելու շնորհիւ. Ալբանացիների վերաբերմամբ Ուսկիւբից գոհացուցիչ տեղեկութիւններ ստացվելը վերացրեց ճգնաժամը. Մինիստրների խորհուրդը, խաղաղութեան մասին սկսված նախնական բանակցութիւնների աղող ընթացքը ի նկատի առնելով, այլևս երկիւղ չունենալով որ Իտալիան յարձակում գործէ գիմէնիական ծովակի վրա, հրամայեց 6 դիվիզիաներ փոխադրել բոլղարական և չերնօգօրական սահմանապահի պաշտպանութեան համար:

—

Բերլին.—«Կեօլնիշէ Ցայտունգը», խօսելով Թիւրքա-չերնօգօրական միջադէպի մասին, գտնում է, որ մեղքը ընկնում է Չերնօգօրիայի վրա, որը փորում է գրգռիչ քաղաքականութիւն: Չերնօգօրիային պատերազմ յայտարարելը Թիւրքիայի համար փրկութիւն կը լինէր ներկայ ներքին ճգնաժամից. Լրագիրը պահանջում է, որ Չերնօգօրիայի հետ խօսեն աւելի համոզիչ լեզուով: Մեծ պետութիւնների համար շահաւէտ չէ այժմ զարթեցնել արևելեան հարցը, որը Եւրօպայի համար այն աստիճան կարևոր է, որ չը պէտք է թոյլ տալ այնպիսի փոքրիկ պետութիւններին, ինչպիսին է Չերնօգօրիան, ինքնակամ կերպով ձեռնարկելու նրա լուծմանը:

—

Ռակիւբ.—Բէբանի թիւրքական կօմենդանտը հեռագրում է, որ չերնօգօրցիները կատարեալ պատերազմ են սկսել: Սահմանագլխի ամրութիւնները քանդված են: Դիակօվոյից շտապով 4 բատալիօն և 14 լեռնային թնդանօթներ են ուղարկվել Բերան. Զինուորական մինիստրը կարգադրեց այնտեղ ուղարկել Դիակօվոյում և Իպէկում բանական ամբողջ բեզերվը:

Մեծ վէզիրը սուլթանի անունից կօնօվալի գեներալ-նահանգապետի միջոցով պախարակեց ալբանացիներին, որ չը բաւականացան կառավարութեան կողմից իրանց արված զիջումներով. Այդ բոլորն անելուց յետոյ, կառավարութիւնը ստիպված պիտի լինի դարձեալ եղբայրական արիւն թափելու, եթէ նրանք չը ցրվեն:

Երկու զօրաբանակներ գրաւեցին Վլէլհսը և պատրաստ են կռիւ մղել ալբանացիների առաջխաղացութեան դէպքում:

Դեկտեմբեր-Կափուից ոչ հեռու երկաթուղագծի վրա պայթվել է ուժանակ. Դուրս են հեռացած իրանց տեղից միայն բէյլիքները:

Ալբանացիները բաւականացան կառավարութեան տուած խոստումներով և վերադարձան իրանց տեղերը:

—

Միտրովիցա.— Առնաուտները պաշտօնից արձակել են 7 պաշտօնեաներ:

Հինգ բատալիօններ գնացին դէպի չերնօգօրիական սահմանը: Վուչիտրնում մուսնետիկը յայտարարեց ազգաբնակութեանը Բէրանը չերնօգօրցիների կողմից պաշարվելու մասին.

ԳՈՐԳԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

Թաւրիզ, 2 օգոստոսի

Պարսկաստանն արտահանում է արտահանման իբրև հում նիւթ մեծ քանակութեամբ բուրդ, բամբակ, մետաքս (բոժոժ), աֆիոն, գումէլ, ևղի, այծի կաշի, այլևայլ վայրկի անասունների մուշտակեղէն մորթի, որ մրգիզէն՝ նուշ, չամիչ, ծիրան (չիր) և այլն: Երկրի այլևայլ տեղերում շինվում են մետաքսի, բամբակի և բրդի գործուածքներ, որոնք համեմատաբար քիչ քանակութեամբ են արտահանվում, մեծագոյն մասը Պարսկաստանումն է սպառվում: Երկրում խոշոր արդիւնաբերական հիմնարկութիւնները չը կան, փոքր արդիւնաբերողներ են և մի տեսակ ձնարհագործական ձեռնարկութիւններ:

Իրանի արդիւնաբերական խոշոր գործը գորգի գործն է, որը, Պարսկաստանի պատմական փառքն ու պարծանքը լինելուց բացի՝ իր նրբութեան և ազնուութեան կողմից, վերջին 10—20 տարիների ընթացքում Ամերիկայի և Եւրօպայի շուկաներում մեծ պահանջ առաջացրեց: Գորգագործութիւնը մեծ ծաւալ առացաւ Պարսկաստանում և այսօր երկրի ամենամեծ արդիւնաբերական և շահաւէտ ապրանքն է համարվում. այնպէս որ տարեկան մօտ 10 միլիօն րուբլու գորգ արտահանվում Միացեալ Պետութիւնները, Եւրօպայի զանազան քաղաքները և վերջին տարիներում մեծ քանակութեամբ Գերմանիա՝ Բերլին:

Պարսկաստանի նման մի աղքատ երկրում փոքր բան չէ 10 միլիօն րուբլու գորգի արտահանութիւնը, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ հազարաւոր երեխաներ ու կանայք գործում են ու ապրում և ապրեցնում բազմաթիւ ընտանիքներ:

Մի քառորդ դար աւելի է, որ անիլինի ներկը Եւրօպայից մուտք գործեց Պարսկաստան և սկսեց գործածվել հին և հասատան ներկի փոխարէն. ու այս պարագան պատճառ դարձաւ, որ պարսկական գորգը պատապարտվեց նուազ յարգանքի: Վերոյիշեալ հանգամանքը պարտից կառավարութիւնը լուրջ ուշադրութեան առնելու, եղաւ և ահա վերջին տարիներում մերթ ընդ մերթ կառավարութիւնը խիստ արտայայտվեց անիլին ներկի Պարսկաստան մուտքն արգելելու և նրա գործունէութիւնը իսպառ խափանելու համար: Եղան ժամանակներ, որ գրավեցին շուկայից յիշեալ նոր ներկերը և հրապարակով կրակի մատնվեցին. բայց և այնպէս անկարելի եղաւ գործի գլուխ բերելը. գորգագործներն յայտնի թէ ծածուկ գործածում էին անիլինը՝ ունենալով համապատասխան յաճախորդներ հին հասատանի ներկով գորգերի և նոր ու գնացող անալինով գորգերի համար: Սպառվող շուկաներում թէ մինի և թէ միւսի համար գնորդներ կան հարկաւ, թէպէտ օտար երկիրներում պատրաստվող գորգերի հանդէպ նոր ներկը վարկաբեկում էր պարկանը: Կառավարութիւնը այս անգամ նորից երևան եկաւ ուժգին թափով. և երկու ամիս առաջ Թէհրանից հրաման տացավ, որ մինչև օգոստոսի 5-ը ով ինչ չափ գորգ ունի՝ պարտական է փոխադրել արտասահման, այս թուից յետոյ ձեռքին կամ որ գործարանում բռնվի անիլինի ներկով գործված գորգ, պէտք է յայտնվի դրամի և այլվի: Ամբողջ Պարսկաստանում գորգագործական շրջաններում տիրեց մեծ յուզում, և գործազուլ, միտինգներ, բողոքներ շատ ու շատ եղան. Թաւրիզում հազարաւոր գործաւորներ ու գործարանատէրերը հեռագրատուն մտան, նահանգապետին դիմեցին իրանց բողոքն անելու համար:

Պէտք է խոստովանած, որ Ատրպատականի նահանգապետ Շուջաուդ-Թովլէն պատասխան հանդիսացաւ ժողովրդի իրաւանց և ոյժ առաջ բողոքողների ձայնին: Երկու օր առաջ մայրաքաղաքում վաճառականների և մինիստրության ներկայութեամբ պիտի կայանար ժողով՝ որոշ եզրակացութեան հանելու համար. դեռ մինչև օրս տեղեկութիւն չը հասաւ, թէ ինչ հետևանք ունեցաւ ժողովը: Երբի ամբողջ գործարանները գրեթէ անգործ են այս րոպէիս և գործաւորները թափառում են անգործ և սոված՝ սպասելով բողոքների հետևանքին:

Մենք նկարագրեցինք գործի մակերևոյթային մասը. կայ նաև էականը:

Պարսկական գորգը գերմանական շուկայում՝ Բերլինում մեծ պահանջ դառնալուց յետոյ, գերմանացի կապիտալիստներ ձեռնարկեցին Թաւրիզում հիմնել մեծ գորգագործարան. մտադիր են նման հաստատութիւններ բանալ նաև այլ կենտրօններում: Եթէ հաւատ ընծայենք պարսիկ վաճառականների ձեռք բերած հաւատարմատէրերի տեղեկութիւններին, գերմանացիներն են այս անգամ խորամանկութեամբ դրդել կառավարութիւնը նոր ներկի դէմ կռիւ հրատարակելու, որպէսզի յետագայում գերմանական արհեստի արտադրութիւնը եղող քիմիական ներկերը նեղմուծեն Պարսկաստան և գործածելի անել տան իրբև հաստատուն ներկ: Բացի դրանից՝ գերմանացի կապիտալիստների հետաքրքրը նպատակն է ներկերի հետ նորոյսէս գործարանները մօտօպոլիա դարձնել, հետևաբար փոքր արդիւնաբերութիւնը խեղդոտել և խոշոր արդիւնաբերութիւնը գերիշխող անել Պարսկաստանում: Ահա թէ ինչ մեծ վտանգի առաջ է կանգնած փոքր արդիւնաբերութիւնը և հազարաւոր ժողովրդական ների ապրուստի շահը: Այդ իսկ կառավարութիւնը կանդրադառնայ իր առաջը դրված մի այսպիսի գործի վրա, և ինչ ուղղութեան կը հետևի գոհ չը տալու համար երկիրը օտար կապիտալիստներին, կը տեսնենք շուտով:

Հայկազուն

ԳԱՖԹԱՆՆԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

—

Ուաշը, 30 յուլիս (Ն. ս.)

Պօղոս վրդ. Գաֆթանեան Ուաշըթ հայ ժողովուրդը վրդովվելէն քաշվելու բան չեն թողում այլ գնաց իր գաւառը մի քանի շաբաթով հանգստանալու համար:

Բայց հոն հանդիպեցաւ այնպիսի չարաչար պարտութեան մը, որ վերջնականապէս ամերիկայի մէջ անոր ամուլ գործունէութիւնը:

Ահա թէ ինչպէս:

Գաֆթանեան Նիւ-Եօրկ հասնելուն պէս՝ կարգ մը դաշնակցականներու, և Արփիարեանի, Ռնճեանի ու Թավշանճեանի անմեղ արիւնով խարխափած արդուճանականներու հետ հրապարակային ժողով մը կը գումարէ Նայթս ավ Քոլըմբըս Հօլին մէջ, ուր աղէկ մը կը հայհոյէ բոլոր պատասխանատուները, ինչպէս նաև Հ. Բ. Ը. Միութեան և «Կոչնակին», կարծելով թէ ասոնք բոլորը Մուշեղ արքեպիսկոպոսին կողմնակիցները ենք:

Հակառակ այն իրողութեան, թէ Նիւ-Եօրկի մէջ քանի մը հազար հայեր կը գտնուին, ու հակառակ Գաֆթանեան վարպետի ճիզվիտութեան, որով ժողովուրդը կը հրաւիրուէր Վարդավառը ածնելու և կաթողիկոսի օծումը յիշատակելու, այդ յուլիս 14-ի ժողովին հազիւ թէ հարիւր հոգի ներկայ գտնուեր ենք:

Ժողովը սաստիկ վերջ վեց դոլար կը հաւաքուի, որպէս զի Գաֆթանեան վրդ. շնորհաւորէ կաթողիկոսին օծումը և իբրև վարձատրութիւն պահանջէ Մուշեղ արքեպիսկոպոսի հեռագրումը Ամերիկայէն:

Գաֆթանեան վրդ. Նիւ-Եօրկի այս ժողովին մէջ յարձակեր է եղեր նաև «Armenia»-ի խմբագրապետ Արշակ Տ. Մահտէսեանի վրայ զոյն խաչազող կոչելով:

Գաֆթանեան ըրած է ասիկա աչքը մըտնելու համար դաշնակցականներու և արդուճանականներու, որոնք չափազանց կասկածոտ Ա. Տ. Մահտէսեանը այն պատճառով, որ անիկա 1905—1908 թ.թ. հրատարակած իր «Արծիւ» թերթով անվախօրէն քննադատեր ու խարազաներ էր այդ երկու կազմակերպութիւնները:

Արշակ Մահտէսեան առնէ մը է վեր բացարձակապէս հեռու կը գտնուի կուսակցական կեանքէ և ինքզինքը նուիրած է ամերիկեան լրագրութեան ու «Armenia» ամսաթերթի հրատարակելու գործին:

Աշխատակցելով մր. Ուիլիըմ Բանտլէք Ֆըրթի, Ամերիկայի ամենէն մեծ լրագրապետին, թերթերուն, որոնք Միացեալ-Պետութիւններու մէջ ամենէն շատ ընթերցողները ունին, Արշակ Տ. Մահտէսեան խիստ մեծ ծառայութիւն կը մատուցանէ հայ ազգին: Մոռնալու չէ մանաւանդ Ադանայի ջարդին առեն՝ անոր միջոցաւ մր. Ֆըրթի թերթերուն մէջ երկցած հայանպաստ զօրաւոր յօդուածները:

Այս բոլոր ծանրազբաղ պատասխանատուութիւնները զատ՝ Արշակ Տ. Մահտէսեան իր անձնական դրամովը կը խմբագրէ ու կը հրատարակէ «Armenia» ամսաթերթը, որուն յիսմաօրէն կը հակառակին կուսակցականները:

Ահա, այսպէս, Գաֆթանեան վարդ. յարձակեր է անհատի մը վրայ, որ քանի մը կուսակցութիւն կարժէ և իր զօրաւոր անհատականութեամբը յարգանք կը ներշնչէ իր բարեկամին և թշնամիին՝ հաւասարապէս:

Արշակ Տ. Մահտէսեան, որքան ալ գրագէտ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայկական Սովետական Հանրապետության Հանրապետական Խորհրդարանի որոշումը Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի նախագահության հրամանագրի մասին

Հայկական Սովետական Հանրապետության Հանրապետական Խորհրդարանը որոշում է.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻՆԵՐԸ

III

ՅԱՓՈՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Նույնպես պատմության մարտական տարրալուծման հետևանքով է, որ ներկայումս ամերիկյան պատմագրության մեջ տիրապետող դիրք է գրավում այսպես կոչված «Նոր Անգլիայի դպրոցը», որի ներկայացուցիչներն են Ջոն Ֆիսկը, Ջեյմս Ֆորդ Ռոդսը, Ալբերտ Հարթը, Ջեյմս Թրասլոու Ադամսը և ուրիշներ։ Այս դպրոցի պատմաբանները, որոնք ամերիկյան բուրժուազիայի ամենահետադիմական շրջանների գաղափարական ներկայացուցիչներն են, ամերիկյան պատմության մեջ տեսնում են միայն «ազատության» և «ժողովրդավարության» զարգացման գործընթացը։ Նրանք ամերիկյան պատմության մեջ չեն նկատում դասակարգային պայքարը, ամերիկյան ժողովրդի հեղափոխական ավանդույթները։ Նրանք ամերիկյան պատմության մեջ չեն նկատում

ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

— Ս. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրամայեց, որ Ս. Էջմիածնի մայր տաճարի հարավային կողմում, Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու մոտ, կառուցվի Հայրենասիրության համար նահատակված զինվորների հուշարձանը։

— Ս. Էջմիածնի Մայր տաճարի հարավային կողմում, Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու մոտ, կառուցվի Հայրենասիրության համար նահատակված զինվորների հուշարձանը։

— Հուշարձանի նախագիծը պատրաստել է Ս. Էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյ